ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 51/27

ք. Երևան 16 հուլիսի 2026թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության «Վարչական տույժ նշանակելու մասին» 14.05.2026թ. թիվ 05100010/30042026/00000689/ՎՏ որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ «Էվչարջեր» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00513966) մաքսային ներկայացուցիչ «Աբառո» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00200748) տնօրեն Արման Բալայանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

«Էվչարջեր» ՍՊԸ-ի մաքսային ներկայացուցիչ «Աբառո» ՍՊԸ-ի ընկերության (ՀՎՀՀ 00200748) տնօրեն Արման Բալայանը (այսուհետ նաև՝ բողոքաբեր) հայտնում է, որ «Էվչարջեր» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00513966) անունով 29.04.2026թ. Վրաստանի Հանրապետություն արտահանման նպատակով կազմվել է թիվ 05100010/290426/0038093 Ա/Հ-ն, որպես ապրանք՝ լիցքավորման կայաններ էլեկտրոմոբիլների էլ. կուտակիչների լիցքավորման համար: Ժամանակավոր պահպանման տարածքն է հանդիսացել «ՎԱԼԵՆՍԻԱ» Հ/Ձ ՍՊԸ-ն:

Հայտարարագիրը ներկայացնելիս ընտրվել է ռիսկերի գնահատման կարմիր ուղի, որի փաստաթղթային ստուգման արդյունքում պարզվել է, որ Հ/Ա–ի մեջ ապրանքերը նշվել են որպես «ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ» և արգելվում են արտահանման համար ըստ Կառավարության N 1518-Ն

30.10.2025թ.-ի որոշման: Կազմվել է (05100010)/(300426)/(00000689/ՎՏ) վարչական տույժ նշանակելու մասին որոշումը՝ 490248 ՀՀ դրամի չափով, գումարը Արման Բալայանի կողմից փոխանցվել է համապատասխան հաշվեհամարին, թիվ 05100010/290426/0038093 հայտարարագրի բաց թողնումը մերժվել է:

Սակայն ցանկանում է հայտնել, որ Հ/Ա-ի մեջ «ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ» նկարագիրը դա թյուրիմացաբար կատարված սխալ է և իրականում սարքերը նոր են: Սարքերը շարունակել են մնալ «ՎԱԼԵՆՍԻԱ» Հ/Ձ ՍՊԸ-ի ժամանակավոր պահպանման տարածքում, հրավիրվել է փորձագետ, ով կատարել է իր մասնագիտական փորձաքննությունը և տվել է եզրակացություն հաստատելով այն փաստը, որ սարքերը նոր են: 16.06.2026թ. կազմվել է նոր արտահանման թիվ 05100010/150626/0054919 Ա/Հ–ն, ընտրվել է ռիսկերի գնահատման կարմիր ուղի: Մաքսային մարմինների կողմից գործի ուսումնասիրության ավարտից հետո թույլատրվել է Ա/Հ-ի բաց թողնումը:

Հաշվի առնելով այն փաստը, որ ապրանքները նոր են՝ բողոքաբերը խնդրում է բեկանել թիվ 05100010/300426/000689/ՎՏ վարչական տույժ նշանակելու մասին որոշումը և ետ վերադարձնել իր տույժի դիմաց վճարված դրամական միջոցները:

Կից ուղարկում է հին ու նոր Հ/Ա-երը, փորձագետի եզրակացությունը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության «Վարչական տույժ նշանակելու մասին» 14.05.2026թ. թիվ 05100010/30042026/00000689/ՎՏ որոշման մեջ մասնավորապես նշված է, որ «Էվչարջեր» ՍՊԸ-ի անվամբ թիվ 05100010/290426/0038093 ապրանքների հայտարարագրով «Արտահանում» մաքսային ընթացակարգով հայտարարագրվել են ընդհանուր 2,470 կգ բրուտտո, 2,467 կգ նետտո քաշով խառը ապրանքներ:

ՀՀ ՊԵԿ ԱՏԳ մաքսային սպասարկման և հսկողության վարչության ՄԳՍ թիվ 1 բաժնի կողմից իրականացվել է թիվ 05100010/290426/0038093 ապրանքների հայտարարագրի փաստաթղթային հսկողություն, ինչի արդյունքում բացահայտվել է, որ հայտարարագրի 1-ին և 2-րդ ապրանքային դիրքերում հայտարարագրված ապրանքատեսակների համար, որոնց ընդհանուր մաքսային արժեքը կազմում է 2,451,240 ՀՀ դրամ, համաձայն ՀՀ կառավարության

30.10.2025թ. N 1518-Ն որոշման, առկա է դեպի եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխման և երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր արգելք:

Փաստի առթիվ 30.04.2026թ.-ին ՀՀ ՊԵԿ ԱՏԳ մաքսային սպասարկման և հսկողության վարչության ՄԳՍ թիվ 1 բաժնի մաքսային տեսուչի կողմից «Էվչարջեր» ՍՊԸ-ի մաքսային ներկայացուցիչ «Աբառո» ՍՊԸ-ի տնօրեն Արման Բալայանի նկատմամբ կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 316-րդ հոդվածի հատկանիշներով՝ թիվ 05100010/290426/0038093 ապրանքների հայտարարագիրը ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրելու համար, որից հետո թիվ 05100010/290426/0038093 ապրանքների հայտարարագրի բացթողնումը մերժվել է:

Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 14.05.2026թ. ժամը 11:00-ին, որի անցկացման վայրի և ժամանակի մասին ծանուցումը տեղադրվել է հարկ վճարողի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջում:

Նյութերի ուսումնասիրությունից պարզվել է, որ «Էվչարջեր» ՍՊԸ-ի անվամբ թիվ 05100010/290426/0038093 ապրանքների հայտարարագրով «Արտահանում» մաքսային ընթացակարգով հայտարարագրվել են լիցքավորման կայաններ էլեկտրոմոբիլների էլ կուտակիչների լիցքավորման համար COMPLEX-T, օգտագործված (կազմաքանդված)՝ 4 հատ և լիցքավորման կայաններ էլեկտրոմոբիլների էլ կուտակիչների լիցքավորման համար WALL COMPLEX, օգտագործված (կազմաքանդված)՝ 2 հատ ԱՏԳ ԱԱ ծածկագիր՝ 85044055000: Վերը նշված ապրանքներն ընդգրկված են ՀՀ կառավարության 30.10.2025թ. թիվ 1518-Ն որոշմամբ հաստատված ապրանքների ցանկում:

Նշված հայտարարագիրը ճշգրիտ տվյալներով հայտարարագրելու արդյունքում ընդհանուր 2,451,240 ՀՀ դրամ մաքսային արժեքով ապրանքատեսակների համար կառաջանար ոչ սակագնային կարգավորման միջոցների ներկայացման պահանջ (հիմք՝ զեկուցագիր թիվ Ն/8-6/84127-2026 առ 30.04.2026թ.):

ԵԱՏՄ Մաքսային Միության Հանձնաժողովի 20.05.2010թ.-ի թիվ 257 որոշմամբ հաստատված՝ ապրանքների մաքսային հայտարարագրի լրացման կարգի 16-րդ կետով սահմանված են արտահանվող ապրանքների հայտարարագրման դեպքում ապրանքների

հայտարարագրում հայտարարատուի կողմից լրացման ենթակա սյունակները, որոնց մեջ ներառված է նաև 44-րդ սյունակը:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 301-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կատարած անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության պետական սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար սույն օրենքով նախատեսված է պատասխանատվություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 316-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը, որն առաջացնում է արգելքների և սահմանափակումների, ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի քսան տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան երեսուն հազար դրամի չափով:

Այսպիսով, «Աբառո» ՍՊԸ-ի տնօրեն Արման Բալայանը թույլ է տվել «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 316-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված մաքսային կանոնների խախտում, որն առաջացնում է արգելքների և սահմանափակումների, ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 334-րդ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 214-րդ, 234 և 283-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածներով՝ որոշում է կայացվել «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 316-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված մաքսային կանոնների խախտում կատարելու համար «Աբառո» ՍՊԸ-ի տնօրեն Արման Բալայանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանելով 490,248 (չորս հարյուր իննսուն հազար երկու հարյուր քառասունութ) ՀՀ դրամ:

3. Բողոքարկման առարկային վերաբերվող իրավական կարգավորումներ և եզրահանգումներ

ԵԱՏՄ Մաքսային Միության Հանձնաժողովի 20.05.2010թ.-ի թիվ 257 որոշմամբ հաստատված՝ ապրանքների մաքսային հայտարարագրի լրացման կարգի 16-րդ կետով սահմանված են արտահանվող ապրանքների հայտարարագրման դեպքում ապրանքների հայտարարագրում հայտարարատուի կողմից լրացման ենթակա սյունակները, որոնց մեջ ներառված է նաև 44-րդ սյունակը:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 301-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կատարած անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության պետական սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար սույն օրենքով նախատեսված է պատասխանատվություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

«Մաքսային կարգավորման մասին» օրենքի 316-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ ապրանքները կամ տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրում ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը, որի հետևանքով չի առաջանում մաքսային վճարների, մաքսային մարմինների կողմից գանձվող այլ հարկերի, տուրքերի և վճարների (բացառությամբ մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնությունների կատարման համար գանձվող պետական տուրքի) չհաշվարկում (պակաս հաշվարկում) կամ չվճարում (պակաս վճարում), ինչպես նաև արգելքների և սահմանափակումների, ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառում՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝ առաջացնում է նախազգուշացում:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 316-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ապրանքները կամ տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրում ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը, որի հետևանքով առաջանում է արգելքների և սահմանափակումների, ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի 20 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 30,000 դրամի չափով:

Հանձնաժողովը հատկանշական է համարում հետևյալ փաստական հանգամանքները: Այսպես, նյութերի ուսումնասիրությունից պարզվել է, որ «Էվչարջեր» ՍՊԸ-ի անվամբ թիվ 05100010/290426/0038093 ապրանքների հայտարարագրով «Արտահանում» մաքսային ընթացակարգով հայտարարագրվել են լիցքավորման կայաններ էլեկտրոմոբիլների էլ կուտակիչների լիցքավորման համար «COMPLEX-T», օգտագործված (կազմաքանդված)՝ 4 հատ և լիցքավորման կայաններ էլեկտրոմոբիլների էլ կուտակիչների լիցքավորման համար «WALL COMPLEX», օգտագործված (կազմաքանդված)՝ 2 հատ ԱՏԳ ԱԱ ծածկագիր՝ 85044055000: Վերը նշված ապրանքներն ընդգրկված են ՀՀ կառավարության 30.10.2025թ. թիվ 1518-Ն որոշմամբ հաստատված ապրանքների ցանկում: Արդյունքում բացահայտվել է, որ հայտարարագրի 1-ին և 2-րդ ապրանքային դիրքերում հայտարարագրված ապրանքատեսակների համար, որոնց ընդհանուր մաքսային արժեքը կազմում է 2,451,240 ՀՀ դրամ, համաձայն ՀՀ կառավարության 30.10.2025թ. N 1518-Ն որոշման, առկա է դեպի եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխման և երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր արգելք: Նշված հայտարարագիրը ճշգրիտ տվյալներով հայտարարագրելու արդյունքում ապրանքատեսակների համար կառաջանար ոչ սակագնային կարգավորման միջոցների ներկայացման պահանջ: Փաստի առթիվ 30.04.2026թ.-ին «Էվչարջեր» ՍՊԸ-ի մաքսային ներկայացուցիչ «Աբառո» ՍՊԸ-ի տնօրեն Արման Բալայանի նկատմամբ կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 316-րդ հոդվածի հատկանիշներով՝ թիվ 05100010/290426/0038093 ապրանքների հայտարարագիրը ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրելու համար, որից հետո թիվ 05100010/290426/0038093 ապրանքների հայտարարագրի բացթողնումը մերժվել է:

Իր հերթին հարկ է կրկին ընդգծել «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 301-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ «Ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության»: Նորմի տառացի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը՝ անկախ մեղքի դրսևորման ձևից:

Հանձնաժողովը գտնում է, որ մաքսային մարմնի կողմից իրականացվել է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն և բողոքաբերի կողմից նկարագրված հանգամանքները չեն կարող հիմք հանդիսանալ «Էվչարջեր» ՍՊԸ-ի մաքսային ներկայացուցիչ «Աբառո» ՍՊԸ-ի տնօրեն Արման Բալայանին վերագրված խախտումն որպես այդպիսին չճանաչելու և/կամ այդ խախտման համար օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվությունից ազատելու համար: Մասնավորապես, տվյալ դեպքում փաստն այն է, որ բողոքաբերի կողմից թույլ է տրվել խախտում, որի համար պատասխանատվություն է նախատեսված վերը նշված իրավանորմով սահմանված կարգով, անկախ հետագայում թույլ տրված խախտումն ուղղելու հանգամանքից:

Ելնելով վերը նշված իրավանորմերի դրույթներից, հիմք ընդունելով սույն որոշման 2-րդ կետում բերված փաստական տվյալները, ինչպես նաև 3-րդ կետում արված եզրահանգումները՝ Հանձնաժողովը գտնում է, որ վարչական վարույթի նյութերով հիմնավորվում է, որ «Էվչարջեր» ՍՊԸ-ի մաքսային ներկայացուցիչ «Աբառո» ՍՊԸ-ի տնօրեն Արման Բալայանը թույլ է տվել «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 316-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված մաքսային կանոնների խախտում, ուստի ՀՀ պետական եկամուտների կոմիտեի արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության «Վարչական տույժ նշանակելու մասին» 14.05.2026թ. թիվ 05100010/30042026/00000689/ՎՏ որոշումը հիմնավոր է և փաստարկված:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության «Վարչական տույժ նշանակելու մասին» 14.05.2026թ. թիվ 05100010/30042026/00000689/ՎՏ որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ «Էվչարջեր» ՍՊԸ-ի մաքսային ներկայացուցիչ «Աբառո» ՍՊԸ-ի տնօրեն Արման Բալայանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկելուն հաջորդող օրվանից:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

7/21/2026

X 

ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ

Signed by: SAHAKYAN HAMLET 2614820296

ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ